ՄԱՐՏԻՐՈՍ. ՎՐԴ.—Մբ. Փոխանորդ 1788 ին. ապա նաև Պկ. Յովհաննէս Պաղտատցիին փոխանորդ։

ՄԱՐՏԻՐՈՍ ՎՐԴ.—Մբ. 1393 ին Լս. Ս. Փրկչի վանքին։

ՄԱՐՏԻՐՈՍ ՎՐԴ.—Մբ. 1575 ին Սօղան գիւղացի (Ալաթ), Կարապետին ընդօրինակել կուտայ Դանիէլ գիրք խորագրով ձեռագիր մը ի յիշատակ Ս. Յակոբի վանքին։

ՄԱՐՏԻՐՈՍ ՎՐԴ. ՎԱՆԵՑԻ.—Մբ. և վանահայր Վարագայ վանքին, Արահու մականուամբ. Բաղիշեցի Նշանաւոր Բարսեղ վրդ.ին հետ 1608 ին կ'այցելէ Ս. Յակոբի վանքը, դիզուած պարտուց վճարման կարգադրութիւն ընելու համար. իր մասին գովեստով կը խօսի Դարանաղցի իր Ժամանակագրութեան մէջ (էջ 324—25), և կը յարէ թէ՝ «. . . Մարտիրոս անտի և Բարսեղն աստից քարոզիւ և դասիւ ի վերայ սուրբ Երուսաղիմայ կողկոզագին պաղատանօք, լալով և մեծաւ ողբով ծանուցին զվտանգեալ թշուառութիւնն Յերուսաղիմայ սուրբ և առաքելաշէն Աթոռոյն Ս. Յակոբայ վանացն մեր և այլ գերահռչակ սուրբ տնօրինական տեղեաց մասին մերոյ. որ հոռոմն և ֆռանգն կու սպասեն առնուլ և ինքեանց գրաւել վասն կարի առաւել վերջին աղքատութեան և տկարութեան։ Եւ այսպիսի մեծակական ողբով կակղացուցին, շնորհօքն Քրիստոսի. ի հաւանութիւն ածին. որ կարապետ անուն իսօնայ մի հօրն բեռն ստակ եր տուել, եւ այլ՝ երկու եւ այլ՝ մի մի բեռ եւ այլքն՝ ըստ կարեաց»։ Մարտիրոս վրդ. «բազում գանձս ոսկւոյ և արծաթոյ» կը հաւաքէ և Բարսեղ վրդ.ն ալ Տիարպէքիր, Եդեսիա եւ Հալէպ գտնուող Վանցի, Ջուղայեցի եւ այլ իշխաններէն նուէրներ ժողվելով ուրախութեամբ կը հասնին Ս. Յակոբի վանքը. ուր երկու վարդապետներու և ընկերակից նուիրաւուներուն համար Միաբանութիւնը կը կատարէ Ջերմագին ընդունելութիւն մը, պարտքերը կը վճարուին և նորոգութիւններ տեղի կ'ունենան Ս. Յակոբի վանքին և Ս. Յարութեան տաճարին մէջ (անդ. էջ 326-27)։

Մարտիրոս վրդ. Վանեցին՝ երկրորդ անգամ ըլլալով՝ ՌԿԹ (=1620) թուին այցելած է Ս. Յակոբի վանքը և Գրիգոր պարք. Պարոնտէրի հետ կնքած եւ ստորագրած է Ս. Տեղեաց խնդիրներու նկատմամբ լատիններու հետ գոյացած համաձայնութեան դաշինքին տակ։ Նոյն դաշինքին լուսանկարը կը գտնուի պատ-